մտեալ ի մէջ և խնդրէին իրաւունս ի պատրիարքէն, զոնեա յաղճատանաց անդորրանալ, զի յոյժ լինէր կռիւն, և ոչ կամէին տալ զԺԴՌ զուռուշն, և Եղիազար վարդապետն ոչ տայր, այլ զանցեալն պահանջէր և Համար տուք ասէր։ Ճարն այս եղեալ որ ՌՌ զուռուշ յեկեղեցեաց վերայ արկ, որ ՁՌ եղև մի բաժինն և զԴՌ զուռուշն ի վերայ Երուսաղէմայ արկ և զԴՌ զուրուշն ի վերայ խօճայիցն՝ զի յուրեանս բաժանեսցին. և եղև այսպէս։ Բայց բազում իրիցունք և աշխարհականք տրտնջացին զպատրիարքէն թէ Անիրաւութիւն արար որ յեկեղեցեաց վերայ արկ. և որք զիտէին զեղեալն, որ զիրն ևս ի նոցունց էր, սակայն առելոյ պատճառ կալան ոմանք. և ամենայն եկեղեցի հնազանդեցան, և Սուրբ Նիկողոսու իրիցունք՝ ոչ, զոյս և արտաքսեաց յեկեղեցոյն զԻԴ–ն ևս միանգամայն, և Զ երէց յԱստուածածնէ առաքեալ, որ մշտնջենաւոր աղօթս կատարէին անդ, որ յաւուրս տօնի Փոխման Սուրբ Աստուածածնի եկեալ եղեն երաշխաւոր[1]) միմեանց և ասին զհազար զուռուշն և ապա մտին յեկեղեցի։ Եւ վասն քիւրէքճոյ փողին՝ առեալ էին յայլազգոյ ումեմնէ[2]) դրամ և ոչ էին տվեալ, և պահանջէր տէր փողոյն և նոքա ոչ տային, այլ յօր աւուր արկանէին։ Յաւուր միում կայր առ պատրիգն [եւ] առ Եղիազար վարդապետն, գայր անօրէնն և իրաւունս խնդրէր. և զԺԱ. իրիցու փիլոնն առ յեկեղեցոյն, և ապա յետ աւուրց հատուցին զնոյն։ Ումեմն պարտական էին յեկեղեցոյն այնմ, և յորժամ տարաք ընծայ առ նոր եղեալ զայմախան Սուլէյման, որ Յունիսի ԺԵ էր լեալ և տէր դրամին նախարար նորա, ասաց առ Վարդապետն տալ զփողն առն այնորիկ. և պատուիրեաց և նա իրիցանցն, և ձգէին յեր-

1) երեշխաւոր. 2) ումեմն.